

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Պատմական գիրությունների թեկնածու

ՀԱԶԱՐԱՄԹՅԱԿԵՉԱՌԻՍԻ ԴԻՄՆԱԴՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ Առաքելական Եկեղեցու Կոստայքի թեմի Ծաղկաձորում գտնվող առաջնորդահատ Կեչառիսի Վաճքը միշնադարյան Հայաստանի ամենանշանավոր Եկեղեցական, հոգևոր և մշակութային կենտրոններից էր: Վաճքի հնագիտ և գլխավոր Սուրբ Գրիգոր Եկեղեցին կառուցել է Բագրատունյաց պետութեան մեծ իշխան Գրիգոր Ապիրատը 1003 թվականին: Այդ 11-րդ դարի արշալուսին էր, երբ 1001 թ.: Քրիստոսի ծննդյան 1000-ամյակին, Անհ մայրաքաղաքում Գագիկ Ա թագավորը կառուցեց զվարժոնցատիպ Ս. Գրիգոր Եկեղեցին (Գագկաշեն), Կատրամիդին թագուհին ավարտին հասցրեց Սմբատ Բ-ի հիմնադրած Մայր Տաճարը: Նույն շրջանում մեծ իշխան Գրիգոր Ապիրատը հիմնեց Կեչառիսի Ս. Գրիգոր Եկեղեցին, սպարապետ Վահրամ Պահլավունին՝ Մարմաշենի վաճքը, և այլն:

1050-ական թվականներին Կեչառիսի Վաճքի հովանավոր է դարձել Գրիգոր Մագիստրոս Պահլավունին: 13-րդ դարում Վաճքը հովանավորել են Վաչուտյան, ապա Պոռշյան Եկեղեցաշինարար իշխանները:

Ս. Գրիգոր Եկեղեցու արևմտյան մասում 12-րդ դարում կառուցվել է մեծ գավիթ: Գլխավոր Եկեղեցու հարավ գտնվում է Ս. Նշան փոքր Եկեղեցին (11-րդ դար), իսկ առա հարևանութեամբ՝ Կաթողիկե Եկեղեցին է, որը 1203-1214 թթ. կառուցել է իշխան Վասակ Խաղբալյանը: Հիմնական վաճական համալիրից դեպի արևմուտք գտնվում է Ս. Հարություն փոքրիկ Եկեղեցին (13-րդ դար):

Վաճքի տարածքում և շրջակայքում կան գեղակերտ խաչքարեր: Դրանցից մեկը կանգնեցվել է Վեցիկ ճարտարապետի հիշատակին: Եղել են նաև մի քանի մատուռներ՝ Ս. Սիոնը, ուր թաղած է եղել Պոռշ իշխանը, Ս. Հոհիկիմնեն և այլն, որոնք հիշատակվում են գրավոր աղբյուրներում, բայց այժմ ավերվել են:

Կեչառիսը եղել է ուսումնական, մշակութային, գրչության կենտրոն, ունեցել հոչակավոր վաճառքայրեր, ինչպես, օրինակ՝ Պետրոսը (12-րդ դար), Գրիգոր Վարդապետ Մանուկին, Ներսես Վարդապետը՝ 13-րդ դարի սկզբներին, իսկ նոյն դարի Վերջերին այստեղ ատեղծագործել է հայ միշնադարյան շնորհայի զիտնական և բանատեղծ Խաչատուր Վարդապետ Կեչառեցին: Մատենադարանում և այլ ձեռագրական հավաքածուներում պահվում են Կեչառիսում ընդօրինակված մեկ տասնյակից ավելի մատյաններ:

Կեչառիսի Սուրբ Գրիգոր Եկեղեցու բարձրադիր գմբեթը քանդվել էր 1828 թ. երկրաշարժից, բայց վերջին տարիներին այլ հիմնավորապես նորոգվեց ավարտիահայ Վլադիմիր Հարությունյանի բարեգործությամբ՝ Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել Եպիսկոպոս Քարամյանի վերաբնույթյամբ: Եկեղեցու համելիսավոր օճումը կատարվեց 2000 թ. հուլիսին՝ ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկորդի:

2003 թ. լրացավ Կեչառիսի կառուցման 1000-ամյակը: Այդ կապակցությամբ հարկ է նամարում առավել հանգամանորեն անրադարձական պատմության ու հիմնադրման իշխան Գրիգոր Ապիրատին, քանի որ Կեչառիսի հիմնադրի անունն ու հիմնադրման թվականը որոշ ենթանակավոր հրատարակություններում սխալ է նշված: Մասնավորապես հայ ժողովրդի պատմության ակադեմիական բազմաթափորյակում և Հայկական սովորական հանրագիտարանում Կեչառիսի հիմնադրի է համարվում Գրիգոր Մագիստրոս Պարիավունին, հիմնադրման թվական՝ 1033¹: Սկզբանաբար քննությունները պահպանված տեղենկությունների համադրումը բոլով են տալիս հարթելու պատմագիտական այս թվայցը կնճիռը:

ԿԵՉԱՌԻՍԻ ՇՆԱԳՈՒՅՆ ԱՐՁԱՌԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցու հիմնադրման մասին է վկայում հայավային մուտքի բարագորի վեցտողայ արձանագրությունը, որի սկզբում, շրջանագծի մեջ, շեղ առանցքով հավասարաթև խաչ է փորագրված:

ՆԶԲ (1033) Թ. ՀԱ(ՅՈՒ) Ի ԹԱԳԱԼՈՐՈՒԹԵՅ
ԱՆ ԳԱԳԿԱ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ(ԵԱ.Ո)Ն
ՍՍՐԳՍԻ, ԵՍ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ, ՈՐԴԻ ՀԱՍԱՆ
Ա, ԾԻՆԷՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՒՄ ԻՆԶ Ի ԲԱՐԵԽՆՈՍՈՒԹ(ԻՒԿ)Ն ԵՒ Ի
Մ ՊԱՏՐՈՒՆԻՆ ԵՒ ԻՄ ՈՐԴԵԱՑՆ. ՈՐՔ ԸՆԹԷՌՈՆՇՔ Զ
ԻՄ ԹԱՂԱԼԹՍ ՑԻԾԵՑԷՔ Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս ԱՂԱԶԵՄ:

Նկատի ունենալով արձանագրության մեջ 1020 թ. մահացած Գագիկ Ա. Բագրատունի թագավորի և 1019 թ. կաթողիկոսական Արքունից հրաժարված Սարգիս Ա. Աւանցու անունների առկայությունը, դեռևս Ղանդ Ալիշանը, այնուինչուն Գարեգին Հովսեփյանը և Ներսես Ակիմյանն առաջարկել են արձանագրության սկզբում նշված ՆԶԲ (1033) թվականը համարել գրչական սխալ և սրբագրել ՆԾԲ (1003)²: Միանգամայն ընդունելի այս տեսակետն ավելի է հիմնավորվում Վերջերս Գագիկ Սարգսյանի հրատարակած Արզականի Ա. Ստեփանոս եկեղեցու կառուցող Գորգ (Գէորգ) քահանայի 1001 թ. արձանագրության շնորհիվ, ուր Գագիկ Ա.-ի և Սարգիս Կաթողիկոսի անուններից հետո հիշատակվում է նոյն Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի անունը՝ «Գրիգորի Հայոց Մագիստրոսի...»³: Ոչ մի կասկած չի մնում, որ 11-րդ դարի սկզբին Հասանի որդի Գրիգոր Ապիրատն արդեն ուներ մագիստրոսի տիտղոս և Հայաստանի ամենաազեղցի իշխաններից էր: Նկատենք նաև, որ 1033 թվականին Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսը վաղուց մահացել էր (1021), իսկ Վասակի որդի Գրիգոր Պարիավունին դեռևս մագիստրոս չէր (նա այդ տիտղոսը ստացավ 1045 թ.):

¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1976, էջ 395, Հայկական սովորական հանրագիտարան, հ. 5, էջ 383:

² Պ. Ալիշան, Ալրարատ, Վեմետիկ, 1890, էջ 259, Գ. Հովսեփյան, Խաղբակեամբ կամ Պոռշեամբ Հայոց պատմութեան մէջ, Աթթիլիսա, 1969, էջ 159, Ն. Ակիմյան, Ներսէս Լամբրոնացի, Վինենա, 1956, էջ 374:

³ Գ. Սարգսյան, Գրիգոր Ապիրատ Հասանի. Հիմնադրի Կեչառիսի վանքի (Վիմագրական նոր վկայություն), «Հիմն Հայաստանի մշակույթը», ժողովածու 12, Երևան, 2002, էջ 111:

Գագիկ Սարգսյանը նույնպես գտնում է, որ Կեչառիսում զործ ունենք գրչական սխալի հետ. «գրիչը ՆՇԲ-ի փոխարեն, սխալմամբ փորագրել է ՆԶԲ»⁴:

Սակայն այս մասին եղել են նաև այլ կարծիքներ: Մասնավորապես Ն. Աղոնցը Գ. Հովհանիսիանի աշխատության գրախոսության մեջ Կեչառիսի երկու արձանագրությունն է (1003 կամ 1033 և 1051 թ.) համարում է ուշ շրջամի՝ 13-րդ դարի գրություններ՝ միաժամանակ կարծելով, որ Հասանի որդին միայն Ապիրատ անունով պիտի հիշատակվեր (ինչպես պատմիչների մոտ է) և ոչ՝ Գրիգոր⁵:

Ա. Մանուչարյանը սխալ է համարում «ոչ միայն 1033, այլև 1003 թվականները», Գրիգոր Ապիրատին նույնացնում է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու հետ և եկեղեցու կառուցումը Վերագրում 1051 թվականին:

Կեչառիսի հիմնադրության վերաբերյալ հայտնի է նաև Սիմեոն Երևանցու «Զամրուս» տեղ գտած հետևյալ վկայությունը՝ «Ակզրնապես հիմնվել է 444 (995) թվին Ապիրատ իշխանի կողմից»⁷: Երևանցին թվական նշելու համար որևէ աղբյուր պիտի ունեցած լիներ, որը, ցավոք, առայժմ հայտնի չէ: Կարելի է ենթադրել, որ 995-ը եկեղեցու հիմնարկերի թվականն է:

ՊԱՏՄԻՉՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ԱՊԻՐԱՏԻ ՄԱՍԻՆ

Ինչպես տեսանք, եկեղեցաշինարար իշխանի անունը Կեչառիսի և Արգականի արձանագրություններում Գրիգոր է (այդպես է հիշվում նաև նրա դատեր արձանագրության մեջ): Նովն Կերպ է վարվել նաև նրա թոռնորդին՝ Ներսես Ծնորհալին, որը «Վիպասանութիւն» անունով հայտնի («Սակս Հայկազն սեփի և Արշակունեացն զարմի») երկում իր հոր՝ Ծովքի իշխան Ապիրատի անունը տալուց հետո, վերջինին պապին հիշատակելով՝ հենց Գրիգոր Ապիրատին է նշում:

«Ճնախնական անուն առեալ
Որ Ապիրատն էր յորջործեալ,
Թոռու մեծին Գրիգորի լեալ,
Որ Մագիստրոս մականուանեալ»⁸.

Գրիգոր Մագիստրոս էր կոչվում նաև Ապիրատ իշխանի մորական պապը (Գրիգոր Մագիստրոս Պահլավունին), սակայն Ծնորհալին գրում է իր հոր տոհմական ծագման մասին, որը, որպես կանոն, արական օծու էր նշում, ուստի չպետք է կասկածել, որ այստեղ նշված իշխան Ապիրատի պապ անվանված «Մագիստրոս մականուանեալ» մեծն Գրիգորը, ինչն Գրիգոր Ապիրատն է: Ինչպես ստորև կտեսնենք, Մատթեոս Ուտիալեցին, Միհրար Անեցին, Վարդան Արևելցին նրան կոչում են «Հայոց մեծ իշխան», և բնական է, որ Ծնորհալին իր հորը համարում է «թոռու մեծին Գրիգորի»:

⁴ Գ. Սարգսյան, Աշվ. աշխ., էջ 112:

⁵ Գ. Հովհանիսիան, Աշվ. աշխ., էջ 464:

⁶ Ա. Մանուչարյան, Քննություն Հայաստանի 4-11-րդ դարերի շինարարական վկայագրերի, Երևան, 1977, էջ 170-171:

⁷ Սիմեոն Կաթողիկոս Երևանցի, Զամրո, Երևան, 2003, էջ 395:

⁸ Հայ դասական քանարերգություն, Բ. Ա., Երևան, 1986, էջ 239:

Հետաքրքրական է, որ հայ պատմիչները Գրիգոր Ապիրատին հիշատակում են միայն Ապիրատ անունով: Այս մասին ունենք 13-րդ դարի պատմիչ Վարդան Արևելցու տեղեկությունը (որը նա քաղել է 12-րդ դարի պատմիչ Մխիթար Անեցու պատմության այժմ կորած բնագրից), պատմիչներ Մատթեոս Ուռիալեցու (12-րդ դ.) և Մխիթար Ալիքվանեցու (13-րդ դ.) հաղորդումները և անանուն հեղինակի ժամանակագրության մեջ տեղ գտած մի վկայություն: Դրանք, իրար լրացնելով, ներկայացնում են նշանակալից գործչի կյանքի պատմությունը:

1020 թ. Գագիկ Ա. Բագրատունու մահից հետո զարդ ժառանգած նրա ավագ որդու՝ Հովհաննես Սմբատի (1020-1041) և վերջինիս կրտսեր եղբոր՝ Աշոտի միջև զարմակալական եղբայրասպան կորածներ են տեղի ունենում, որոնք ավարտվում են 1021 թ.⁹ Պետրոս Կաթողիկոսի և իշխանների միջնորդությամբ կալացած հաշոտությամբ: Որոշվում է, որ Հովհաննես Սմբատը պետք է թագավորի Անհում ու նրա շրջակալքում, իսկ Աշոտը՝ թագավորության մնացյալ տարածքներում, որը պատմիչները կոչում են «Դիմի աշխարհ»:

Վարդան Արևելցին Գրիգոր Ապիրատի մասին հիշատակություն է թողել հենց այս դեպքերի առնչությամբ: Ստորև բերվող հատվածը Արևելցին շարադրել է Մխիթար Անեցու երկից օգտվելով: Նա գրում է. «պատվական երեց Մխիթար Անեցին... այսպես է ասում»⁹ և սեղուկների պատմությանը վերաբերող մի ընդարձակ մեջբերում կատարում Անեցու: Հատվածն ավարտելուց հետո գրում է. «Նոյն մարդը (այսինքն Մխիթար Անեցին, կ. Մ.) պատմում է նաև Հովհաննես թագավորի մասին...»¹⁰: Ակներև է, որ Արևելցին օգտվել է Մխիթար Անեցուց:

Այժմ ծանրթաճանք բուն պատմությանը: «Նոյն մարդը պատմում է նաև Հովհաննես թագավորի մասին, թե նրա եղբայր Աշոտը թալինի ստորոտում մահամերձ հիվանդ ձևանալով, թագավորին կանչում է իր մոտ, զյսավերի կողմում որոզայք փորելով և դրա միջոցով բռնելով նրան, տալիս է Ապիրատ կոչվող մած իշխան ձեռքը, որպեսզի սպանի: Իսկ Ապիրատը հոժար կամքով նրան տանում-դնում է իր աթոռին Անհում ասելով. «Ինչո՞ւ ձեռք բարձրացնեմ Տիրոջ օծյալի վրա ու նրա տեղը մի խելագարի նշանակեմ»:

Նրա (Ապիրատի) մասին ասում են, որ խելացի ու առատաձեռն լինելու շնորհիվ ոչ նշանավորներից մեծացավ և մինչև անզամ տեր դարձավ տասներկու հազար հեծյալի: Նա շինեց Կեչառիսի սուրբ վաճքը, ինչպես որ Վահրամ իշխանը՝ Մարմաշենը»¹¹

Թշնամացած արքայազուն եղբայրների միջև հայտնված մեծ իշխան Ապիրատի ազնիվ արարքը, սակայն, թանկ է ասում նրա վրա: Վերջինիս կալվածքները հավանաբար գտնվում էին Աշոտի տիրությունում (մասնավորապես Կոտայքում), ուր նա այլևս չէր կարող վերադառնալ, սակայն չէր կարող նաև Անհում հաստատվել, քանի որ դրանից քիչ առաջ Աշոտի հետ միասին դաժան պարտության էր մատնել անեցիների զորքին¹²:

⁹ Վարդան Արևելցի, Տինգերական պատմություն, աշխարհաբար թարգմանություն՝ Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 2001, էջ 135:

¹⁰ Նոյն տեղում, էջ 139:

¹¹ Նոյն տեղում, էջ 139-140, գրաբար՝ 102-103, կ. Մաթեոսյան, Վարդան Արևելցին Անհուի պատմության մասին, «Հքմանակին», 2002, ԺԱ-ԺԲ, էջ 93:

¹² Մատթեոս Ուռիալեցի, ժամանակագրություն (աշխարհաբար թարգմ. և ծանոթագր.՝ Հ. Բարթկլյանի), Երևան, 1991, էջ 15:

Մատթեոս Ուռիալեցին ասես շարունակում է այս պատմությունը և ներկայացնում, թե ինչ եղավ հետո:

«Այդ օրերին Հայոց մեծ իշխան Ապիրատը՝ Հասանի որդին, անցյալում Աշոտի կողմն անցած լինելու համար երկուողեղով Հովհաննես թագավորից, ապստամբելով փախչում է նրանց և տասներկու հազար ձիավորներով զնում է Դվին քաղաքը՝ պարսից Ապուտար զորավարի մոտ, որը բազում օրեր մեծարում է նրան: Սակայն Ապուտարի մոտ են զայսի չարախոս մարդիկ և ասում, թե «այսպիսի քաջ և հզոր մի մարդ, որ մեծ զորքով քեզ մոտ է եկել, քեզ էլ, տաճկաց ողջ երկիրն էլ կկործանի»: Դրա վրա ամիրան, սրտում ոյն կապելով, մյուս զորականներից գաղտնի Ապիրատին բարեկամական զրուցի է հրավիրում ու ծածուկ սպանում այդ քաջ, հզոր և բովանդակ Հայաստանում հոչակված մարդուն:

Իսկ Սարի անունով մի իշխան, որ Ապիրատ մեծ իշխանի զորավարն էր, վերցնելով նրա կնոջն ու որդիներին և հեծյալ զորքը, գնում է Անի քաղաքը: Հովհաննես թագավորն անչափ սգում է Հայոց Ապիրատ իշխանի անարդար մահը, իսկ նրա Ապլշահապ, Վասակ որդիներին, Սարին և բոլոր զորականներին, Հայոց թագավորը գավառներ ու պաշտոններ է տալիս»¹³:

Ուռիալեցին և Արևելցին դեպքերի թվականը չեն նշում: Բայց հայտնի է, որ Հովհաննես Սմբատի և Աշոտի բախումներն ավարտվել են 1021 թ.: «Թագաւորք վերջինը Բագրատումիք» բնագրի վերջում ավելացված անանուն հեղինակի փոքր ժամանակագրության մեջ (սխալմամբ վերագրվել է Ստեփանոս Օրբելյանին) արձանագրված է Ապիրատի մահվան թվականը. «ՆՀ (1021) Թուրքն ենար զԱպիրատն»¹⁴:

Ուռիալեցին Ապիրատի անունը տալիս է ևս երկու անգամ, եթե հիշատակում է նրա թոռներին՝ Բարսեղ Ա. Անեցի Կայտողիկոսին և նրա եղբայր, պատերազմում զոհված և Կեչառիսում թաղված Գրիգոր իշխանին¹⁵:

Գրիգոր Ապիրատ իշխանի մասին նշում է նաև Մխիթար Այրիվանեցին, որը հավանաբար օգտվել է Մխիթար Անեցուց, բայց նաև մի լրացուցիչ տվյալ է հայտնում. «Ապիրատ իշխան 12 000 հեծելի (տէր). սա շինեաց զկեչառուս և ենան զառուն Երևանալ»¹⁶: Ինչպես տեսնում ենք, Այրիվանեցին ավելացնում է Ապիրատի շինարարական հայտնի ձեռնարկների թիվը՝ նշելով նրա կողմից Երևանի շրանցքի շինարարությունը: Այս վկայությունը միաժամանակ նպաստում է Ապիրատի հիմնական տիրուվաների տեղորոշմանը Կոտայք գավառում, քանի որ այստեղ են և՛ Կեչառիսը, և՛ Երևանը:

Այսպիսով, նշված բոլոր մատենագրական աղյուրներն Ապիրատ անունով են կոչում Հասանի որդի իշխանին, որը կառուցել է Կեչառիսի վանքը, և որը նույն Կեչառիսում իրեն անվանում է Հասանի որդի Գրիգոր Մագիստրոս (նա Գրիգոր Մագիստրոս է անվանվում նաև երկու այլ վիմագրերում): Կասկածից վեր է, որ խոսք նույն մարդու մասին է: Հայագետները խնդրի լուծման տրամաբանական միջոց են առաջարկել իշխանին վերա-

¹³ Աշխարհաբար հրատարակության այս հատվածում Ապիրատի որդիներից մեկն է համարվում «Սարեն», մինչեն գրաբարից երևում է, որ խոսք Սարի զորավարի մասին է, որի՞՛ «և Սարէ և ամենայն զօրաց» թագավորը համապատասխան բաժին է տալիս (Ուռիալեցի, 1991, էջ 16-17):

¹⁴ Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, թ. 2, Երևան, 1956, էջ 502:

¹⁵ Ուռիալեցի, 1991, էջ 227, 289:

¹⁶ Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 58:

գոելով Գրիգոր Ապիրատ երկանումը: «Պահլավումիների մէջ Գրիգոր-Ապիրատ երկանունց սովորական էր», գրում է Գարեգին Հովսեփյանը¹⁷: «Գրիգոր և Ապիրատ մէկ անձնատրութեան կրած երկանուններն են», ավելացնում է Ն. Ակիմյանը¹⁸:

Սակայն, մեր կարծիքով, Գրիգոր Ապիրատն իր կենդանության օրոք երկանուն չուներ: Նա իրեն կոչում է «Հասանի որդի Գրիգոր Մազհատոռ» (1003 թ.), Գորդ քահանան նրան անվանում է «Գրիգոր Հայոց Մազհատոռ» (1001 թ.) իշխանի դուատը, որը Վետս Սարգսի կիցն էր՝ «Քրոգոր Մազհատոռ» (1042 թ.)¹⁹, իսկ թոռնորդին՝ Ներսես Շնորհալին՝ «Մազհատոռ մականուանեալ... մեծն Գրիգոր»²⁰: Նրա անունը «Ապիրատ» ձևով հիշատակող առաջին պատմիչները՝ Մատթեոս Ուտիայեցին և Միսիրապ Անեցին, իրենց պատմությունը գրել են իշխանի մահից համապատասխանաբար շուրջ 110 և 170 տարի անց: Այդ ժամանակամիջոցում Ապիրատ անունը, որը, մեր կարծիքով, ժամանակին Հասանի որդի Գրիգոր Մազհատոռի համար հավանաբար մականուն է եղել, արդեն բավական տարածված էր նրա իսկ սերունդների շնորհիվ, և պատմիչները նախընտրել են հենց այդ անունն օգտագործել:

Վիմագրական և մատենագրական տվյալների «հաշտեցման» համար այսօր նպատակահարմար է իշխանին Գրիգոր Ապիրատ կոչել:

Ինչ վերաբերում է Անիի թագավորության մէջ նրա զբաղեցրած պաշտոնին, ապա, պատմիչների համաձայն, նա կրել է «Հայոց մեծ իշխան» կոչումը:

ԱՊԻՐԱՏՅԱՆ ԻՇԽԱՆԱՏՈՆՄԻ ԾԱԳՈՒՄԸ

Բագրատունյաց ժամանակաշրջանի իշխանական տների պատմությունը դեռևս ամբողջովին չի ուսումնասիրվել: Առավել հայտնին Պահլավումներն են: Նույն շրջանի մեկ այլ իշխանական տաճ՝ Ապիրատյանների Վերաբերյալ մինչև այժմ կատարված միակ ուսումնասիրությունը պատկանում է Ն. Ակիմյանի գրչին և հրատարակվել է 1956 թ. Վիեննայում, Ներսես Լամբրոնացուն Ավիրված մենագրության Գ մասում, որը Վերնագրված է «Ազգաբանութիւն Պահլավումնեաց, Հասանեանց, Թոռնիկեանց և Հեթումնեանց»²¹: Վերնագրում Հասանյաններ կոչելով, տեքստում և տոհմածառում Ն. Ակիմյանը նրանց անվանում է Ապիրատյաններ, որը, կարծում ենք, ավելի նպատակահարմար է՝ նկատի ունենալով մեծ իշխան Գրիգոր Ապիրատի առանձնահատուկ դերը տոհմի հաստատման գործում:

Զնայած նշված ուսումնասիրության առկայությանը, հետագա շրջանի աշխատություններում Ապիրատյանները, որպես առանձին իշխանատոհմ, գոելեւ անտեսվել են: Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության մէջ այս տոհմը հիշատակվում է միայն մեկ անգամ. «Աշոտ Գ-ից սկսած հայ թագավորները սկսեցին ազատների (մանր ազնվականության) միջավայրից առաջ քաշել նոր իշխանական տներ: Աննշան դիրք ունեցող որոշ իշխանական տներ, օրինակ, Պահլավումիններն (Աբուղամրենք) ու մասամբ Ա-

¹⁷ Գ. Հովսեփյան, Աշվ. աշխ., էջ 160:

¹⁸ Ն. Ակիմյան, Աշվ. աշխ., էջ 374:

¹⁹ Ղ. Ալիշան, Ծիրակ, Վեմեսիկ, 1881, էջ 134:

²⁰ Հայ դասական քնարերգություն, էջ 239:

²¹ Ն. Ակիմյան, Աշվ. աշխ., էջ 327-457:

պիրատյանները, շուտով բարձր դիրքի տիրացան»²²: Հետագա շարադրանքում, սակայն, ոչինչ չկա Ապիրատյանների գրաված դիրքի մասին, չի հիշատակվում անզամ տոհմապես մեծ իշխան Գրիգոր Ապիրատի անունը: Իշխանատոհմն անտեսված է նաև այլ հրատարակություններում, սակայն այստեղ չպետք է դիտավորություն տեսնել, պարզապես Ապիրատյանները, որ Պահլավունիների հետ խնամիական կապ են ունեցել, շատ դեպքերում նույնացվում են նրանց հետ:

Ապիրատյանները կարևոր դեր են կատարել միջնադարյան Հայաստանի ոչ միայն քաղաքական, այլև եկեղեցական պատմության մեջ՝ տալով կաթողիկոսներ ու եպիսկոպոսներ:

Ապիրատյան տոհմի հիմնադրման մասին ասվում է. «Զամանէ ասեն յանձնանից մեծացեալ, և վասն խելացի և առատ ձեռացն մինչև լիներ տէր երկոտասան հազար հեծելոց, որ և շինեաց զուրբ ուխտն Կեչառու...»²³:

Մատթեոս Ուռիալեցու ժամանակագրության և Կեչառիսի արձանագրության մեջ հիշատակվում է մեծ իշխան Գրիգոր Ապիրատի հոր անունը՝ Հասան²⁴, սակայն նրա մասին ուրիշ ոչինչ հայտնի չէ: Ինչպես երևում է Վերը բերված Վկայությունից, հենց ոչ նշանավորներից՝ «յանձնանից մեծացեալ» Ապիրատին է պատկանում իշխանատոհմի հոչակման դափնին, ուստի տոհմանունն էլ պետք է նրան վերապահել:

Առանձին քննության կարիք ունի «Ապիրատ» անձնանվան ծագումը: Այն դժվար է բացատրել հայերեն նույնինաստ բառով, որն ակնհայտորեն բացասական իմաստ ունի, և բնականաբար մասնագետների տարակուսանքն է հարուցել: Հ. Աճառյանը «Հայոց ամձանառուների բառարանում» գրում է. «Ա.ՊԻՐԱ.Տ, արդյոք հայերեն ապիրատ «անարդար» բառն է. և ինչպես կարող էր այսպիսի մի հորի ածական մարդու անուն դառնալ: Այս անունը գործածական էր մեր մեջ ԺԱ.-ԺԳ. դարերում»²⁵: Նշենք, որ առաջին Ապիրատից հետո ունենք նոյն տոհմից սերող այդ անունով իշխաններ, որոնց թվում նաև Գրիգոր Գ. Պահլավունի և Ներսես Ծնորհալի Կաթողիկոսների հայրը:

Անվան բացատրության մասին ն. Ակիմյանը հետևյալ ծանոթագրությունն է տալիս. «Անուն կարելի չէ ստուգաբառել հայերեն ապիրատ բառով: Թերևս աղաւաղուած ձևն ըլլայ ապիպատ պատուանունին, արտասանուած նախ ապիրպատ, ապա ապիրատ, որուն նպաստած կարող է ըլլալ ապիրատ բառը: Բայց թէ Ապիրատ ընդունած էր Բիւզանդիոնի արքունիքն «ապիպատ» տիտղոսը, չէ վկայուած»²⁶:

Հարկ է նշել, որ հայ իրականության մեջ հիշատակված առաջին Ապիրատը հենց Գրիգոր Ապիրատն է, ուստի անվան (մեր համոզմաբ՝ սկզբնապես մականվան) ծագումը պետք է փնտրել հենց նրա կենսագրության մեջ:

Ուշագրավ է, որ 1001 թվականին նա արդեն ուներ բյուզանդական մագիստրոս պատվաստիճանը, որը նշանակալից իրողություն էր: Մագիստրոսը բյուզանդական արքունիքի կողմից օտարերկրացիներին տրվող ամենաբարձր պատվաստիճանն էր, որը նեթադրում

²² Հայ ժողովոյի պատմություն, էջ 267:

²³ Արևելցի, Աշվ. աշխ., էջ 103:

²⁴ Ուռիալեցի, Աշվ. աշխ., էջ 16, 226, Ն. Ակիմեան, Աշվ. աշխ., էջ 374:

²⁵ Հ. Աճառյան, Հայոց ամձանառուների բառարան, Բ. Ա. Երևան, 1942, էջ 193:

²⁶ Ն. Ակիմեան, Աշվ. աշխ., էջ 373:

էր նաև ամենամյա շոշափելի դրամական վարձատրություն²⁷: Պատահական չէ, որ Արգականում Գորգ քարանան իր արձանագրության սկզբում նշում է. «...ի ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԳԱԳԿԱ ԱԾԽԱՌՀԱԿԱԼԻ, ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ՄԱԳԻՍՏՐՈՒՄԻ...»²⁸:

Ն. Ակիմյանը ենթադրել է, որ Գրիգոր Ապիրատը մագիստրոսի կոչումն ստացել է 1001 թ., երբ բյուզանդական Բարսեղ (Վասիլ) Բ կայսրը Հայաստան է եկել²⁹: Սա միանգամայն հավանական է, քանի որ Դավիթ Կյուրապաղատի մահից հետո (1000 թ.) Արա տիրովորները ժառանգած կայսրը երբ եկավ Հայաստանի արևմտյան շրջաններ, շրջակայքի մեջ ու փոքր իշխանավորները շտապեցին Արա մոտ և զանազան տիտղոսներ ու պատիվներ ստացան: Այս մասին տեղեկություններ է հայտնում Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը՝ աճվանապես նշելով առավել կարևորներին: Ըստ պատմիչի, կայսեր մոտ է զայիս Նվիրկերտի ամիրան և ստանում «զմաժիստոռութեան պատիհան», որով ստանում է Վրաց Գորգեն թագավորը, բայց դժգոհ է մնում «անարգան իր համարեալ զմաժիստոռութեան պատիհան»: Գաջիկ Ա-ն կայսեր մոտ չի գնում «իբրև փոքրութիւն համարեալ զգնալն իր առ նա», բայց նաև արգելք չի հանդիսանում, որ իր հպատակները զնան, ինչպես, օրինակ՝ իր քրոջ որդի Աբրուսահլը³⁰: Ըստ հավանական է, որ հենց այս ժամանակ է մագիստրության պատիկ ստացել նաև բազմամարդ, ինծելազոր ունեցող Գրիգոր Ապիրատը: Բայց որպեսզի նա մագիստրության պատվին արժանանար, պետք է մինչ այդ արդեն աստիճանակարգային որոշակի դիրք ունենար, մանավանդ եթե նշանավոր ազնվականական ծագում չունեն:

Ահա պյտեղ է, որ առաջ է զայիս Արա ապիրատ կամ ապուրապատ տիտղոս ունենալու ենթադրությունը, որոնցից կարող էր առաջանալ Ապիրատ մականունը: Ի տարբերություն հայոց մեջ բավական տարածված Գրիգոր աճվան, Ապիրատ-Ապիրատ մականունն ավելի աճնատական էր, թեևևաբար՝ հիշվող: Նկատենք նաև, որ 1045-1058 թվականներին Հայաստանի նշանակալից մասի իշխանությունը վարում էր ողջ Երկրով հոչակած մեկ այլ Գրիգոր Մագիստրոս, Վասակի որդի Պահլավունի իշխանը, և Գրիգոր Ապիրատի անունը մոռացության բաժին կամ շփոթության առարկա կարող էր դառնալ (ինչպես և է այսօր), եթե չունենար Ապիրատ «տարբերակը»:

ԱՊԻՐԱՏՅԱՆՆԵՐ ԵՎ ՊԱՇԼԱՎՈՒՆԻՆԵՐ

Ինչո՞ւ են Ապիրատյանները երեսն նոյնացվել Պահլավունիների հետ: Բանն այն է, որ Գրիգոր Ապիրատի սպանությունից հետո երբ Արա երկու որդիները Աճի եկան և զերմ ընդունելություն գտան Հովհաննես Սմբատ թագավորի մոտ, սերտորեն կապվեցին Պահլավունիների հետ: Գրիգոր Ապիրատի որդիները Ապլչահապն ու Վասակն ամուսնացան Գրիգոր Մագիստրոս Պահլավունու երկու դուստրերի հետ (ցավոր Արանց ամուսները չեն պահպանվել): Փաստորեն տոհմի ճյուղավորումն սկսվեց Ապիրատյան իշխանացունե-

²⁷ Հ. Բարբիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, Երևան, 2002, էջ 669:

²⁸ Գ. Սարգսյան, Աշվ. աշխ., էջ 111:

²⁹ Ն. Ակիմյան, Գրիգոր Ապիրատ, որդի Հասանայ, Մագիստրոս, «Ակոս», 9, 1945, էջ 12-13:

³⁰ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, ՄՊԲ, 1885, էջ 276-278:

ոից և Պահլավունի իշխանադրությունից կազմված հենց այդ երկու ընտանիքներից: Նշենք օրանց ժառանգներից մի քանիսն միայն:

Վասակը մնաց Անիում, իսկ Ապաշխառը՝ անեղոց՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու հետ մեկնեց Միջազնուր ու հաստատվեց Ծովք բերդում³¹: Նա ունեցավ չորս որդի՝ Ապիրատ, Գրիգորիս, Վահրամ, Վասակ: Գրիգորիսը հոգևորական դարձավ և իր քոռու՝ Հայոց Կաթողիկոս Գրիգոր Վկայատերի (Գրիգոր Մագիստրոս Պահլավունու որդու) կողմից կարգվեց Եղիպատոսի հոգևոր առաջնորդ: Ծովքում մնացած Ապիրատի չորս որդիներից երկուսը՝ Գրիգորիսը և Ներսեսը, հաջորդաբար դարձան Հայոց Կաթողիկոս (Գրիգոր Գ Պահլավունի՝ 1113-1166, Ներսես Դ Ծնորհալի՝ 1166-1173): Սրանց Վասիլի եղբորորդին էր Գրիգոր Դ Տղա (1173-1193) Կաթողիկոսը, իսկ Զորավար եղբոր որդին էր Գրիգոր Զ Ապիրատ (1194-1203) Կաթողիկոսը:

Անիում մնացած Վասակի ընտանիքն առաջնակարգ դեր ձեռք բերեց Ծեղդայանների տիրապետության շրջանում: Նրա չորս որդիներից Եշանավոր իշխան Գրիգորը փրկեց Մանուկ ամիրայի կյանքը և պատերազմում զոհվեց, որից հետո օրա դիմ մեծ հանդեսով հողին հանձնվեց Կեչառիսում: Վասակի մյուս որդին էր Բարսեղ Ա. Անեցի Կաթողիկոսը (1105-1113), որին 1072 թ. Անիի եպիսկոպոս ձեռնադրեց իր մորենուրայի Գրիգոր Վկայաւոր Կաթողիկոսը³²: Վասակի թոռ և Գրիգորի որդի Հասանի զավակներից մեկը Գրիգոր Ապիրատ իշխանն էր, մյուսը՝ Անիի Եշանավոր Բարսեղ Բ Եպիսկոպոսը³³:

Այս համառու թվարկումն իսկ վկայում է, թե ինչպիսի գործիչներ է տվել Պահլավունիների հետ խնամիացած Ապիրատյան տոհմը: Հատկանշական է, որ Ապիրատյանները պահպանել են իրենց տոհմին հատուկ անունները (Հասան, Գրիգոր, Ապիրատ, Ապլչառապ, Վասակ), բայց հատկապես կաթողիկոսության աստիճանի հասած հոգևորականները չեն մոռացել շեշտել իրենց սերումը Գրիգոր Լուսավորչի տոհմից՝ Ակատի ունենալով իրենց Վասակ և Ապլչառապ պապերի խնամիական կապը Պահլավունիների հետ:

Այժմ տեսնենք, թե այս երկու տոհմերն ինչպես են առնչվում Կեչառիսում:

Նշենք, որ այն միայն եկեղեցի չէր, այլ վանք, և պատահական չէ, որ պատմիչները Գրիգոր Ապիրատին կոչում են Կեչառիսի սուրբ ուխտի հիմնադիր: Վարդան Արևելցին գրում է: «Նա շինեց Կեչառիսի սուրբ վանքը, ինչպես որ Վահրամ իշխանը՝ Մարմաշենը», որից հետո բնագրի հին օրինակում Զշկած է՝ «որպեսզի միայն անցավոր բաների մեջ ճոխ չլինեն, այլ նաև՝ անմահների բնակավայրում, որ հանգչում են իրենց զարմի հետ միասին՝ դամբարանում ակնկալելով վերին կյանքը»³⁴: Հայտնի է, որ զորավար Վահրամ Պահլավունին (Գրիգոր Մագիստրոս Պահլավունու հորեղբարյուն) 1046 թ. պատերազմում նահատակվելուց հետո թաղվել է Մարմաշենում: Հավանական է, որ Կեչառիսն էլ դարձել է Ապիրատյանների տոհմական հանգստարանը: Ինչպես վերը նշվեց, այստեղ է թաղվել Գրիգոր Ապիրատի թոռը՝ պատերազմում զոհված Գրիգոր իշխանը:

Սակայն Կեչառիսի վանքի պատմությանը անմիջականորեն առնչվում է նաև Գրիգոր Մագիստրոս Պահլավունու անունը: Գրիգոր Ապիրատի մահից հետո Գրիգոր Պահլավու-

³¹ Ն. Ակիմեան, Ներսես Լամբրոնացի, էջ 379-380:

³² Մ. Ութայեցի, Աշվ. Աշխ., էջ 226:

³³ Ն. Ակիմեան, Ներսես Լամբրոնացի, էջ 378-400, Կ. Մաքնովան, Աթի, Ս. Էշմիածին, 1997, էջ 48-70:

³⁴ Կ. Մաքնովան, Վարդան Արևելցին Անիի պատմության մասին, էջ 93:

պիտի իր բովանավորության տակ առավ նրա որդիներին, իսկ 1045 թ. Բագրատունյաց ալետության ամենամի հետո բյուզանդական կայսրից ստացավ մագիստրոսության պատիվ. «Գրիգոր որդի քաջին Վասակայ... զնաց առաջի թագաւորին և... տայ զրանալին Բջնոյ զթագաւորն և զամենալին զիր զիայրենի ժառանգության և... առնու զպատի մագիստրոսութեան և տեղին բնակութեան ի սահման Միջազգետաց...», գրում է պատմիչը³⁵: Գրիգորը նույնական Տարոնի ու Միջազգետքի կուսակալ:

Այդ շրջանում կայսրությունը ընդծված պայքար էր Ակսեղ Հայոց Եկեղեցու դեմ: Կաթողիկոսական Աթոռու հետացվել էր Անիից, դավանաբանական հողի վրա հայերի Ակատմամբ Ակսեղ էին բազմաբնույթ հալածանքներ³⁶: Նման պայմաններում Գրիգոր Մագիստրոս Պահլավունին փորձեց արքունիքում ունեցած իր կապերն օգտագործելով արտոնություններ ստանալ առանձին վանքերի համար: Այդ բախսնին արժանացան երկու վաճ՝ Մարմաշենն ու Կեչառիս:

Մարմաշենին կայսերական արտոնություն շնորհելու մասին է վկայում Պահլավունի իշխանի նամակը՝ հասցեագրված Մարմաշենի Սութեննս վաճառորը³⁷: Ավելի ընդարձակ են Կեչառիսի մասին պահպանված տեղեկությունները:

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՊԱՇԱՎՈՒՆՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՉԱՋԱՌՈՒՄ

Գրիգոր Մագիստրոս Պահլավունու անունից մի մեծ արձանագրություն է գրված Կեչառիսի Ս. Գրիգոր Եկեղեցու հարավային պատին: Սակայն պահպանվել է նաև այս արձանագրության հետ առնչություն ունեցող, ժամանակին իտալերեն թարգմանված և Հռոմի դիվանական մելում պահպանված մի փաստաթություն, որ հրատարակել է Սեն Մարտենը, և որից քաղերով՝ այն գրաբարի է վերածել Ալիշանը: Գրությունը հետևյալն է.

«Ի Ծ (1051) թուականին, ի ժամանակս Կոստանդնոյ Մոնոմախի թագաւորի Հայոց (Ցունաց), դրւսս Վասպուրականի, զաւախ Մաղկնուց և Գրիգոր Մագիստրոս որդի Վասակայ, հրովարտական և հրամանաւ Վերոյասացեալ թագաւորին՝ հիմնադրեալ շինեցի զեկեղեցին ի տեղուց որ կոչի Կեչառու, ի նախասացեալ գաւառին Մաղկնուց, հանդերձ մատրամբ. և նուիրեցի զտաճարս և գեկեղեցին յանուն Սրբոյն Գրիգորի Լուսատրչի մերոյ. և զարդարեցի զսա սպասուք արձաթեղինօք և ոսկեղինօք, գրովք և այլովք պիտոյիք, որպէս վայել էր տաճարիս: Դարձեալ ետու եկեղեցւոյ գեօնս երկուս և այզի մի:»

(Ես) մեք շնորհին Աստուծոյ եպիսկոպոսունքս Բջնոյ՝ Վաճական և Համավար, սահմանեցաք և հաստատեցաք ի թեմ և կալուած Վերոյգրեալ եկեղեցւոյ՝ գեօնս քսան և հինգ և քաղաք մի, որք են Բուժան, Ծոկաթն, և այլն...»

Ես հաստատեցաք զվեհոս մերով ձեռնագրովս և կնքովս: Արդ եթէ որ յետ մեր կամ յեկեղեցականաց կամ յաշխարհականաց իշխեցք: հակառակ կալ վճռոյս մերոյ, նզովս առ-

³⁵ Արհաստակիսի Լաստիվերցոյ Պատմութիմ (աշխատասիրությամբ՝ Կ. Ցուգրաշյամի), Երևան, 1963, էջ 62:

³⁶ Կ. Մաթեվոսյան, Անի, էջ 36-47, 193:

³⁷ Գրիգոր Մագիստրոսի թղթեր (աշխատասիրությամբ՝ Կ. Կոստանդնոցի), Ալեքսանդրապոլ, 1910, էջ 103-104, 304:

ցէ ի Սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէ և թժԸ հայրապետացն Նիկոյ ժողովոյն, և մասն և քածին նորա ընդ Յուղայի մատնչի և ընդ խաչինուացն Քրիստոսի եղիցի, իսկ որ հաստատուալ պահէ՝ օրինեալ եղիցի ի Տեսոնէ Աստուծոյ»³⁸.

Ինչպես տեսնում ենք, փաստաթուղթը թվակիր է՝ 1051 թ., զրա առաջին մասը գրված է Գրիգոր Մագիստրոս Պարլավունու, երկրորդ մասը՝ Բշմի եպիսկոպոսներ Վանականի և Համավարի (⁹) անունից, որոնք նշում են Կեչառիսին որպես թեև հատկացված 25 զյուղի և մեկ քաղաքի մասին: Ցավոր բնակավայրերի անուններն աղավաղված են, և ուսումնասիրողները միայն Բուժանը Բուժականի հետ նույնացնելու հնարավորությունն են ունեցել:

Փաստաթուղթում Գրիգոր Մագիստրոս Պարլավունուն նշում է իր կառուցած եկեղեցու մասին՝ «Բիմնադրեալ շինեցի զեկեղեցին ի տեղուս որ կոչի Կեչառոս», որն ուսումնասիրողները նույնացնում են Ս. Գրիգոր եկեղեցու հարևանությամբ կառուցված Ս. Նշան եկեղեցու հետ»³⁹:

Մեր կարծիքով, փաստաթուղթում որոշ չափով մեծացվել է Գրիգոր Մագիստրոս Պարլավունու դերը Կեչառիսում նպատակ ունենալով բյուզանդական արքունիքին ցուց տալ, որ վաճքը պատկանում է Պարլավունուներին (զրանց հիմնածն է, ինչպես Մարմաշենը):

Այժմ ծանոթանամք Կեչառիսի վեցտողյա մեծ արձանագրությանը, որի բովանդակության մեջ առկա հակասությունները հայագիտությունը դեռևս չի պարզել:

«1. Ի Բինգիարիւրրորդի ամի թուականութեանս Թորգոմնան, ի թագաւորութեան ս(ուր)ը և ինքնակալ թագաւորին Կոստանդնեա Մանումախին, բերաւ ուսկի մատանիս զոր հզարին և առաջինոյն բարեկ

2. պաշտին Գրիգորո Մագիստրոսին, կիտաւանին և դուկին Վասպուրականի և Տարանո, Արշակունյան և Հայկազն(ո)յն մեծաւ աշխատութեամբ ազատեալ եր զմեծ և զիշուակաւոր եկեղեն

3. ցիրս իր և ոչ այլ ինչ հայցէ, բայց միայն աղաւաս առնել ս(ուր)ը և ինքնակալ թագաւորին Կոստանդնեայ ընդ նմին և ծառահն Ք(րիստոս)ի Գրիգորոյ և որդոց իւլոց և յիշատակ կարգեալ յեկեղեցիք Կ

4. Աչոռուաց ցուր Մագիստրոսն կենդանի է ամեանայն շաբաթ աւր զժամն Հասանա արասցեն անխափան և յետ եկիցն Մագիստրոսին արասցեն անխափան, արդ (որ) ոք այս վճոյի հաստատն խափանել շանա թ

5. Ե յառաջնորդաց ոք իցէ կամ յիշխանաց կամ ի քահանահց այնպիսի Յ և ԺԸ հայրապետացն Ազովեալ եղիցի և քածինն ընդ Յուղայի եղիցի և ընդ տիրասպան քահանիցն և այս գիր մեր է Յովանիսի շնորին Ա(ստուծոյ) Բշ

6. Առ էպիսկոպոսին և ս(ուր)ը և մեծի հաւաս Բարսոյիս, Էթն ոք այս գրոյս խափանել շանա այնպիսի Ազովս չ(ար)աշարս ընկալցի ի սրբ Լուսաւորչէն Գրիգորո և յամեանայն սրբոց և ի մէնջ, կատարիչը գրոյս աւրինեալ եղի...»⁴⁰

Արձանագրությունն ունեցել է մի քանի հրատարակություն, բայց ամեանամբողջական Գ. Հովսեփյանի մոտ է: Արձանագրության թվականը Հ. Շահմաթունյանցը, Ղ. Ալիշանը, Կ. Կոստանդնանը և Ակզրում նաև Գ. Հովսեփյանը կարդացել են «Ի Բինգիարիւրրորդի

³⁸ Ղ. Ալիշան, Արարատ, էջ 260, Գ. Հովսեփյան, Աշվ. աշխ., էջ 158:

³⁹ Գ. Սարգսյան, Աշվ. աշխ., էջ 112:

⁴⁰ Գ. Հովսեփյան, Աշվ. աշխ., էջ 312:

ամի», այսինքն $500+551=1051$, որը նաև Հռոմի դիվանական փաստաթղթի թվականն է: Սական Գ. Հովսեփյանը նկատելով, որ վերոբիշյալ փաստաթղթում նշվում են Բջնի Վաճական և Համավար եպիսկոպոսները, իսկ արձանագրության մեջ նույն Բջնի Հովհաննես եպիսկոպոսը փորձել է խնդիրը լուծել արձանագրության թվականը «Ի հինգիարից երրորդի ամի» կարդալով, որով ստացվում է $500+3+551=1054^{41}$: Բայց անգամ թվականի այս, մեր կարծիքով, ոչ այնքան համոզիշ վերընթերցմամբ արձանագրության մեջ առկա հակասությունները չեն վերաբռնում: «Մեզ համար պարզ չէ միան, թէ ի՞նչ Հասան է, որին մատենագիր Գրիգոր Մագիստրոսը իր արձանագրութեան մէջ կամենում է, որ յիշեն, քանի ինքը կենդանի է», գրում է Գ. Հովսեփյանը⁴²:

Այս հարցը ել յուրովի փորձել է լուծել Ն. Ակիմյանը՝ կարծելով, որ արձանագրության առաջին մասը Պահավունի Մագիստրոսից է, իսկ երկրորդը («ընդ Ամին» բառերից սկսած)՝ բոլորգիր՝ Գրիգոր Ապիրատինը, այդ պատճառով էլ հիշվում է վերջինիս հայր Հասանը: Նա նաև նկատում է, որ Գրիգոր Մագիստրոս Պահավունու ԾՀ և Կէ թղթերից դատելով «1051, կամ ասկէ թիշ լառաջ կամ ետքը Բջնոյ եպիսկոպոս էր Եփրեմ... Ուստի Ցովի. եպիսկոպոս և Բարսեղ մեծ հայր կը պատկանին 1003 շրջանին, երբ կառուցուեցաւ նկեղեցին»⁴³:

Գրիգոր Մագիստրոս Պահավունու սան Եփրեմի 1050-ական թվականներին Բջնի եպիսկոպոս լինելու մասին դիտարկումը կարևոր է, սակայն Հովհաննեսը չէր կարող 1003-ին Բջնի եպիսկոպոս լինել, քանի որ այդ եպիսկոպությունը հաստատվել է Պետրոս Գևոսադարձ կաթողիկոսի և Հովհաննես Սմբատ թագավորի հրամանով 1031 թ.: Ապընդունելի է նաև Ակիմյանի կարծիքը Կեչառիսի մեծ արձանագրության երկու տարբեր մասերից կազմված լինելու մասին, քանի որ արձանագրությունը մեկ ամբողջություն է և միատեսակ գրչություն ունի:

Գ. Հովսեփյանը նշում է արձանագրության բարբառային և հնագրական որոշ առանձանահատկությունները, որոնցից մի քանիսը կապվում են ուշ շրջանի՝ 13-րդ դարի հետ⁴⁴:

Կարծում ենք, ուշադրության է արժանի նաև Մոնոմախի անվան «Մաւանումախ» գրությունը:

Արձանագրությունն ունի ևս մի հետաքրքրական մանրամասն, որին ցայծմ ուշադրություն չեն դարձել: 3-րդ տողից հետո տողակզբում փորձիկ խաչքանդակ կա (քառակուսի փորվածքի մեջ հավասարաթև խաչ), որի պատճառով 4-րդ և 5-րդ տողերը մի փոքր խորքից են սկսվում: Դժվար թե խաչը քանդակված լիներ նախապես (արձանագրության փորագրությունից առաջ), որպես ձևակորման տարր, քանի որ նկեղեցու այլ մասերում զամանական չկամ, և բացի այդ խաչը այնքան փոքր է, որ չէր կարող դիտվել որպես առանձին զարդ: Հետևաբար մեծ հավանականությամբ կարելի է ասել; որ այն քանդակվել է արձանագրության գրության ժամանակ: Խաչքանդակը, փաստորեն, երկու մասի է բաժանում վեցտողյա արձանագրությունը:

⁴¹ Նշվ. աշխ., էջ 161, 312:

⁴² Նշվ. աշխ., էջ 161:

⁴³ Ն. Ակիմյան, Ներսես Լամբրոնացի, էջ 377:

⁴⁴ Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 312-313:

Նկատենք, որ սովորաբար երբ արձանագրությունների մեջ նման նշաններ (հիմնականում խաչեր) են դրվում, ապա դա արվում է արձանագրության սկզբում: Հենց այդպես է արված նոյն պատի ստորին մասում մուտքի բարավորի վրա Գրիգոր Ապիրատի արձանագրության մեջ: Մինչդեռ մեր քննած «մագիստրոսյան» արձանագրության մեջ խաչաքանդակը տեղադրված է 3-րդ տողից հետո, մեր կարծիքով բովանդակային կապ ունենալով հաջորդող տողերում արտահայտված մտքի հետ: Իսկ հիշյալ հատվածը պարունակում է եպիսկոպոսական որոշումն ու անեծքի բանաձեռք: Քառակուսու մեջ առնված խաչաքանդակն այստեղ, մեր կարծիքով, արձանագրված խոսքերը հաստատող «կնքող» նշանակություն ունի:

Այժմ փորձենք համեմատական վերլուծության միջոցով պարզել դիվանական փաստաթղթի և Կեչառիսի արձանագրության նմանություններն ու տարրերությունները:

Նախ տեսնենք, թե ինչ ընդհանրություններ կան:

Ա. Երկու վկայագիրն էլ կառուցվածքով նման են, ունեն առաջին մաս՝ գրված Գրիգոր Մագիստրոս Պահլավունու, և երկրորդ մաս՝ գրված «Չնորմիւն Աստուծոյ Բջնոյ եպիսկոպոս» անվանված հոգևորականների կողմից:

Բ. Երկուսի առաջին մասում էլ նշվում է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու նախաձեռնությամբ Կեչառիսի՝ բյուզանդական Մոնումախ կայստից ստացած առանձնաշնորհման մասին. «Քերա ոսկի մատանիս», - ասվում է արձանագրության մեջ, (որով՝ «մեծաւ աշխատութեամբ ազատեալ էր զմեծ և զիշչակաւոր եկեղեցիքս»), իսկ փաստաթղթում նշվում է՝ «Իրովարտակաւ և հրամանաւ... թագաւորիս»: Սա համեմատելի է Մագիստրոսի՝ Մարմաշենի Սոսթենես վաճառորդ գրած նամակի հետ, որը նախ նշվում է «կարմրակերտ մելանամ զիծ թագաւորական... զոր առաքեաց... Կոստանդիանոս արքայ Մատմամախն... լոյծ զօրաւոր բանս՝ հանդերձ կնքովն ոսկեղինաւ», ապա ավում է, որ վաճառիայր գա և տանի ոսկե մատանիս՝ «եկեսցես դու և տարցիս զոսկի մատանիս»⁴⁵ (կայսեր հրովարտակը՝ ոսկե կնիքով):

Գ. Երկուսն էլ նույն թվագրումն ունեն:

Դ. Երկու գրությունները եզրափակող անեծքի բանաձեռն ունեն նույն բաղադրիչները, որը թեև հիմնականում ընդունված կաղապարով է, բայց նաև ինքնատիպ է հատկապես Ս. Գրիգորի նորվիթ նշան առումով:

Այսպիսով՝ երկու վկայագրերի միջև առկա կապն ակներև է, և բնական է ենթադրել, որ նախ եղել է գրությունը, որը ստորագրությամբ ու կնիքով հաստատել են Բջնիի եպիսկոպոսները («հաստատեցաք զվիռու մերով ձեռնագրուս և կնքուս»), ապա՝ արձանագրությունը:

Այժմ տեսնենք, թե որոնք են երկու վկայագրերի հիմնական տարրերությունները:

⁴⁵ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 104:

Դիվանական փաստաթուղթ

Արձանագրություն

1. Նշվում է Գրիգոր Պահլավունու տիտղոսը և նրա անունը. «Դուքս Վասպորականի, գաւառի Շաղկնոց և Գրիգոր Մագիստրոս որդի Վասակյալ»:

Պահլավունու տիտղոսաշարն ավելի մեծ է, քայլ չկա նրա նոր անունը. «Գրիգոր Մագիստրոսին, կիսաւանտին և դուկին Վասպորականի և Տարանո, Արշակունյան և Հայկազնոյն»: Հետագա շարադրանքում հիշվում է Հասանը, արձանագրային մի ձևակերպան մեջ, որ սովորաբար հիշատակվում է արձանագրողի հայրանունը:

2. Մագիստրոսը նշում է եկեղեցու և մատուռների կառուցման և դրանց տրված առաւ նվիրատվությունների մասին. «Հիմնադրեալ շինեցի զեկեղեցին ի տեղտցու որ կոչի Կեչառուս... համեմեծ մատրամբ. և նուիրեցի գուածարս և զեկեղեցին յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ. և զարդարեցի զսա սպասուք... Դարձեալ ետու եկեղեցւոյ գեօնս երկուս և այգի մի»:

Որևէ շիմարարության կամ նվիրատվության մասին չկա ոչ մի վկայություն կամ ակնարկ, քայլ կեչառիսի եկեղեցիները համարվում են Մագիստրոսին՝ «մեծաւ աշխատութեամբ ազատեալ էր զմեծ և զիշակաւոր եկեղեցիք իր»:

3. Մագիստրոսը պահանջում է աղոթել կայսեր, ճան իր ու զավակների համար, միաժամանակ՝ ամեն շաբաթ օր պատարագել, քանի դեռ ինը ողջ Ե՛ Հասանի համար, իսկ մահից հետո՝ իր համար:

Բջջի եպիսկոպոս Հովհաննեսը և նայր Բարսեղ հաստատում են Մագիստրոսի՝ իր հիշատակը պահպանելու և ամենշաբաթյա պատարագի մասին պահանջը՝ «այս գիր մեր է Թովանիսի շնորհին Աստուծոյ Բջջու եպիսկոպոսի և սուրբ և մեծի հաւրո Բարսեղս, եթե ոք այս գրոյն խափանել չանա...» (հետևում է ամենքի բանաձեռ): Ոչինչ չի ասվում Կեչառիսի թեմի, զյուղերի ու կալվածքների մասին:

4. Բջջի եպիսկոպոսներ Վանականն ու Համավարը եկեղեցուն (վաճքին) հատկացրել են թեմ և կալվածք՝ 25 գյուղ և մի քաղաք. «...սահմանեցար և հաստատեցար ի թեմ և կալուած վերոյգրեալ եկեղեցւոյ՝ գեօնս քսան և հինգ և քաղաք մի, որը են Բուժան, Ծոկաթն...»:

Ինչպես տեսնում ենք, երկու վկայագրերն ունեն էական նմանություններ և բավական մեծ տարրելություններ: Ուստինասիրողուներին դեռևս չի հաջողվել վերջմականացես պարզել իրականությունը, քանի որ փաստերն իրոք բավականին խնդրվել են:

Մեր ենթադրությունը հետևյալն է: Հնարավոր է, որ արձանագրությունը գրվել է ավելի ուշ (այս մասին են խոսում Գ. Հովսեակյանի հնագրական դիտողությունները, ինչպես ճան

Ն. Արդնացի որոշ դիտարկումները⁴⁶: Այն գրողները՝ Բջջի եպիսկոպոս Հովհաննեսը և հայր Բարսեղը, ձեռքի տակ ունեցել են վերը Աշված փաստաթյուի պատճենը կամ տարբերակը և հիմնականում օգտվել Արամից, բայց բաց են թողել այն կետերը, որոնք արձանագրության ստեղծման ժամանակ արդեն անհրական էին: Մասնավորապես, անհնար էր, որ եթե փաստաթյուն Աշված զյուղերը դեռևս Կեչառիսին պատկանեին, դրանք չնշվեին: Արձանագրության գրության ժամանակ անուշադրության կամ մոռացության է մատնված եղել Գրիգոր Մագիստրոս Պահլավունու տոհմաբանությունը, և տեքստը կազմողները Կեչառիսի մեկ այլ, բայց, փաստորեն, նույն պատի վրա գտնվող (1003 թ.) արձանագրության մեջ առկա Գրիգոր Մագիստրոսի (Գրիգոր Ապիրատի) հայրանունը՝ Հասան, նույնությամբ փոխադրել են 1051 թվականը կողոյ արձանագրության մեջ: Արձանագրության հետինակներն անբարեխիղ են եղել անզամ կայսեր անունը Աշեկիս («Մանումախ»), որը նույնպես խոսում է գրության ուշ շրջանի պատկանելու մասին: Մեր կարծիքով, արձանագրողների հիմնական նպատակը Կեչառիսի՝ կայսերական առանձնաշնորհում ունեցած վաճակները ցույց տալիս է եղել:

Հովհաննես անունով Բջջի եպիսկոպոս հիշատակվում է 1298-99 թթ., որը Ստեփանոս Օրբելյանի՝ Կաթողիկոս Գրիգոր կ. Անավարդեցուն հասցեագրված թուղթը ստորագրողներից մեկն է եղել⁴⁷: 1298 թ. մի հիշատակարանում նա բնութագրվում է որպես «այր... երկայնամիտ և զուարթ դիմաւը»⁴⁸:

Ինչու՞մ, Կեչառիսի մագիստրոսյան մեծ արձանագրությունը դեռևս կարոտում է իր վերջնական բացահայտմանը:

Ամփոփենք: Մեր հիմնական նպատակը Կեչառիսը կառուցողի անձի խնդրի հստակեցում էր, վաճքի հիմնադիր Գրիգոր Ապիրատի և նրա տոհմի սկզբնավորման մասին պահպանված տեղեկությունների ամբողջացումը, ինչպես նաև Կեչառիսում Գրիգոր Մագիստրոս Պահլավունու խաղացած դերի պարզաբանումը: Ելեկով սկզբնադրյուրների տվյալներից, կարող ենք եզրակացնել, որ Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցին 1003 թ. կառուցել է Հայոց մեծ իշխան Գրիգոր Ապիրատը (1001-ից՝ մագիստրոս): Սիմեոն Երևանցու հաղորդած 995 թվականը կարելի է համարել եկեղեցու շինարարության սկզբի՝ հիմնարկերի թվականը:

Գրիգոր Ապիրատը մահացել է 1021 թ., որից հետո նրա երկու որդիները դարձել են Գրիգոր Պահլավունու (1045-ից՝ մագիստրոս) փեսաները, որի շնորհիվ Ապիրատյան տոհմի շառավիղները բարձր դիրք են գրավել՝ աշխարհիկ և հոգևոր մի շարք նշանավոր գործչներ տալով:

Բազրատումաց թագավորության անկումից հետո Հայ Եկեղեցու նկատմամբ բյուզանդացիների սկսած հալածանքների շրջանում Գրիգոր Մագիստրոս Պահլավունին արքունիքում ունեցած դիրքն օգտագործելով կարողացել է արտոնություններ ձեռք բերել իր տոհմին պատկանող Մարմաշենի, ինչպես և Կեչառիսի վանքի համար, որի վերաբերյալ պահպանվել է 1051 թվակիր դիվանական փաստաթուղթ և համապատասխան վիմագիր արձանագրություն:

⁴⁶ Գ. Հովսեփիան, Աշվ. աշխ., էջ, 312, 464:

⁴⁷ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմ.: Ա. Աքրամայամի, Երևան, 1986, էջ 362:

⁴⁸ Ժ. դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Ա. Մաթևոսյան), Երևան, 1984, էջ 824: